

Ծնողական Հանդիպում
Տեմբրեան Կեդրոն
Հոկտեմբեր 20, 2000

Յարգելի ներկաներ,

Հաւաքականութիւններու համար կենսունակութեան ու յաջողութեան նախապայմաններ են ունենալ համապարփակ տեսլական ու յստակօրէն սահմանուած նպատակներ, արտաքին փոխուող պայմաններուն յարմարելու հմտութիւն եւ անմիջական նպատակակէտեր իրագործելու յարմարաւետ միջոցներ: Առանց այդ նախապայմաններուն անոնք կը վերածուին աննպատակ գոյութեան, անտարբերութեամբ ու ճարահատ ենթարկուելով կեանքի դառն պարտադրանքներուն:

Կ'ապրինք ժամանակաշրջանի մը մէջ երբ գիտութիւնը կը զարգանայ յաւետ առ ազացող կշռոյթով, յառաջացնելով նոյնքան արագ փոփոխութիւններ: Համաշխարհային մակարդակի վրայ, այսօր տեղեկութիւններու ու գիտելիքներու ընդհանուր գումարը կը կրկնապատկուի երկու տարին անգամ մը ու կ'ակնկալուի որ 2010 թուականին կրկնապատկուի ըլլայ երկշաբաթական դրութեամբ: Որպէս հետեւանք այս զարգացումին, բոլոր երկիրներու կրթական մարզը ստիպուած է յարմարիլ նոր իրադրութեան կամ մարիլ նոյն արագութեամբ:

Որպէս Լիբանանցի Հայ անհատներ ու համայնք երկար տարիներէ իվեր կ'ապրինք դժուարին օրեր: Ունինք բազմատեսակ մտահոգութիւններ որոնք կը կարօտին լուծումներու եւ բազմաթիւ հարցադրումներ որոնց պատասխանները ոչ անպայման համոզիչ են: Մեր գոյութեանկան տագնապին մեծ մասը դժբախտաբար կը մնայ մեր կարողութիւններէն վեր ու մեզի կը մնայ միայն յուսալ որ անոնք հրաշքով մը փարատին: Ապագայի անորոշութիւնը երբեմն կ'առաջնորդէ տարակուսանքի ու յուսահատութեան, հարցականի վերածելով նոյնիսկ մեր էութիւնն ու ինքնութիւնը: Սակայն միշտ, ապրելու մղումը կը յաղթահարէ բոլոր դժուարութիւնները ու յարմարելով ամենէն դաժան պայմաններուն մեր աշխատանքով կը փորձենք կարելիի սահմանին մէջ պահպանել մեր արժանապատուութիւնն ու հիմնական արժէքները:

ՀԲԸՄիութիւնը հաւատալով Հայ Դպրոցին ու Հայեցի Դաստիարակութեան կենսական կարեւորութեան, ու որպէս հետեւանք մեր վարժարաններուն տասնեակ տարիներու յաջողութիւններուն ու բերքին, մշտական հոգածութեամբ ու պատասխանատու ծրագրումներով կը շարունակէ ստեղծել նոր միջոցներ որպէսզի

մեր վարժարաններում արդեն իսկ յարաբերաբար բարձր մակարդակը ատելի զարգանայ ու դրականապես բաղադրատուի Լիբանանի լաուգոյն հաստատություններում հետ: Այս նպատակով, կրթական ու վարչական մարզի ծրագրուած բարեկարգումները, սահմանափակ ժամանակաշրջանի մը համար, յանձնուած են SDC մասնագիտական ընկերութեան որոնք ՀԲԸՄիութեան ղեկավարութեան անմիջական հսկողութեան տակ, համագործակցաբար տնօրէններու եւ ուսուցչական կազմին հետ, յառաջիկայ երեք տարիներուն պիտի աշխատակցին մեզի հետ իրագործելու համար անհրաժեշտ յեղաշրջում մը, որ ապագային պիտի շարունակուի մեր վարժարաններու տնօրէններուն ու դաստիարակներուն միջոցաւ:

Վերջին տասնամեակի ընթացքին ՀԲԸՄիութեան Վարժարաններու ուսուցիչները իրենց մասնակցութիւնը բերին բազմաթիւ արտաքին ու ներքին կրթական սեմինարներու ու մասնագիտական դասընթացքներու, բարելաւելու համար մեր դպրոցներուն կրթական մակարդակը: Անոնք անհրաժեշտ ու օգտաշատ աշխատանքներ էին, սակայն անբաւարար` հիմնական միջոցառումներով որակական փոփոխութիւններ ներմուծելու առկայ կառոյցին մէջ: Ինչպէս Լիբանանի դպրոցներուն մեծամասնութիւնը, զանազան պատճառներով, չէինք կրցած գոհացում տալ ժամանակի ընթացքին փոխուող կրթական ու վարչական նոր պահանջներուն ու քայլ պահել գործնական կեանքի նոր պայմաններուն հետ:

Բարեկարգումի ներկայ ծրագիրը կը տարբերի անցեալին մշակուած մասնակի փորձերէն: Կը միտի ըլլալ լայնածաւալ ու համապարփակ մասնագիտական միջոցառումներով անհրաժեշտ փոփոխութիւններ ներմուծել գոյութիւն ունեցող կրթական կառոյցին մէջ: Կը յուսանք որ կրթական ամբողջական ցանցը 9ծնողք, աշակերտ, ուսուցիչ, ՀԲԸՄ-ի ղեկավարութիւնՕ օգտուի այս կարեւոր ձեռնարկէն ու գործնապաշտ բլանաւորումով վերատեսութեան ենթարկուին առկայ կազմակերպչական թերութիւններ ու դաստիարակչական յաւելեալ գիտելիքներով ու մեթոտներով մեր արդեն իսկ վաստակաւոր մարդուծին կարողութիւնները ատելի զարգանան, որպէսզի Հայ Դպրոցը զօրացնէ իր իւրոյն դիմագիծը եւ կարենայ յաջողութեամբ շարունակել իր առաքելութիւնը, քայլ պահելով ընկերային ու տնտեսական նոր պահանջներուն հետ:

Ծնողները, կրթական ցանցին անբաժանելի մասնիկը պէտք է ըլլան: Որպէս արդիւնք ծրագրուած բարեկարգումներուն, առարկայական տուեալներով ու գործնական արդիւնքներով անոնք պէտք է համոզուին թէ ՀԲԸ Միութեան վարժարանները Լիբանանի ոչ-Հայկական կրթական լաուգոյն

հաստատություններում ջամբած ուսումին կողքին կրնան կազմաւորել Հայ անհատը իր ազգային ոգիով, լեզուական հարստութեամբ ու մշակոյթի էական գիտելիքներով որպէս գործնական կեանքի առաւելութիւն եւ ոչ թէ սովորութեան վերածուած ժամանակավրէպ տեղեկութիւններ: Ծնողները իրենց յաճախակի երկխօսութեամբ տնօրէնութեան ու ուսուցչական կազմին հետ պէտք է հետեւին իրենց գաւակներուն զարգացումի գործընթացին ինչպէս նաեւ սատարեն դպրոցին բարեկեցութեան, գործնական ու շինիջ առաջարկներով:

Պայման է որդեգրել մոր չափանիշներ գնահատելու համար աշակերտներուն ընդհանուր աշխատանքը: Պետական քննութիւններու կողքին, որոնք կը մնան ստիպողական, պէտք է կարեւորել լեզուներու գերազանցօրէն տիրապետելու յատկութիւնը ու ընկերային փոխ-յարաբերութիւններու վարժութիւնը: Նկարագրի դաստիարակութեամբ պէտք է ունենան անձնական արժեհամակարգ ու ինքնավստահ դիրքորոշումով պատրաստուին պատասխանատու ու անդիմաբեր քաղաքացիներ ըլլալու: Հայեցի դաստիարակութիւնը պէտք է մշտապէս վերագաղի ենթարկուի յարմարելու համար շրջապատի գոյութեանական տուեալներու ազդեցութեանը, մեր մշակութային ինքնութիւնը կազմող տարրերուն վրայ: Այդ ուղղութեամբ կարելի է յիշատակել, մեր դաստիարակներուն խմբային աշխատանքով պատրաստուած Հայոց Պատմութեան փորձառական պրակները որոնք կը հանդիսանան առաջին փորձ մը, արդիականացնելու Հայեցի Դաստիարակութեան պարունակը:

Անհրաժեշտ է որ ուսուցիչները ունենան բաւարար բարոյական ու նիւթական պատճառարկում՝ հաւատալու համար շարունակական ասպարեզային զարգացումին ու յետեւողական ստեղծագործական մասնակցութեան: Կրթական մակարդակի բարելաւումին համար տարրական պահանջք է որ կրթական յարմար միջոցներ, պիտոյքներ ու սարգաւորումներ, ճիշդ ժամանակին տրամադրելի ըլլան: Գնահատանքի աւելի արդար չափանիշներու հաստատումով կարելի է ակընկալել որակական փոփոխութիւններ ու արդիւնաբեր աշխատանք: Նոյնիսկ լաւագոյն տրամադրութիւններ ժամանակի ընթացքին կրնան խամրիլ եթէ առարկայական եւ ենթակայական տուեալներու վրայ հիմնուած տարբերութիւններ նկատի չ'առնուին համագործակցութեան ոգի ցուցաբերող ու արդիւնաբեր եւ մուգ խանդավար տարրերու միջեւ:

Ծրագրուած մոր կառոյցին մէջ էական է որ տնօրէնները ունենան աւելի լայն իրաւասութիւններ առնելու յարմարաւետ ու կարուցողական որոշումներ, յտակօրէն սահմանուած իրենց աշխատանքային գործունէութեան, պարտականութիւններու ու իրաւունքներու ծիրին մէջ. ինչպէս նաեւ ունենան ծրագրուած նպատակներ իրագործելու համար պէտք եղած փոխադարձ

վստահութեան վրայ հիմնուած ուղղահայեաց ու հորիզոնական սահուն փոխ-յարաբերութիւններու կարելիութիւնները:

Լիբանանի ՀԲԸՄիութեան ղեկավարութեան էական ու անհետաձգելի պարտաւորութիւններէն մէկն է նկատի առնել ծնողներու փոխուող կարծիքներն ու դիրքորոշումները, քննարկել անոնց ծնունդ տուող առարկայական պատճառները եւ յարմարաւետ միջոցներով տալ տրամաբանական բացատրութիւններ ու գործնական միջոցառումներով տարհանոգել ծնողներու աճող թիւ մը որոնք զանազան պատճառներով կը մտադրեն կամ կը ստիպուին հեռանալ Հայ Դպրոցէն:

Ծրագրուած խմբային աշխատանքը ունի իր դժուարութիւնները: Հաւանաբար ըլլան տարակուսանքներ, տարակարծութիւններ ու անցողակի սայթաքումներ: Բնական է որ ըլլան չնախատեսուած վտանգներ երբ կը փորձենք բարեփոխել տարիներու ընթացքին կազմուած սովորութիւններ, մտապատկերներ, աշխատանքի կերպեր, հաղորդակցութեան միջոցներ ու առօրեայ կեանքի կենցաղական պարտադրանքներ:

Այս բոլորին իրազէկ ըլլալով, ծրագրուած բարեփոխումները յեղափոխութիւն պիտի չ'ըլլան: Այլ՝ յստակ նպատակներով ու բոլորանուէր մասնակցութեամբ պիտի ամռացնենք Հայ Դպրոցին հիմները, փորձենք բարելաւել ինչ որ արդէն իսկ իրագործուած է վերջին վաթսուն տարիներու ընթացքին ու գործնապաշտ մօտեցումով պիտի ներմուծենք ինչ որ գերացանց է այլուր եւ մեզի՝ համար նպատակայարմար. հաւատալով որ յառաջդիմութեան բացակայութիւնը կը նշանակէ տեղ քայլ ու դանդաղ մահ: Թող այս փորձառութիւնը ըլլայ արդինաբեր: Մեր դպրոցները վերածենք հաճելի ու բարեբեր աշխատանքավայրի ուր ծիւերը ծաղկին ու դաստիարակները ստանան արժանի յարգանքը ու շարունակեն ծաղկեցնել գոհունակութեամբ:

Իմ խորին շնորհակալութիւններս կը յայտնեն Նախագահուհի Տիկին Լուիզ Միմոն-Մանուկեանին, պատկերելի Կեդրոնական Յանձնաժողովի անդամներուն որոնք քաջ որոշումը առին իրագործելու համար այս ծրագիրը: Շնորհակալութիւն կը յայտնեն Տիկին Գարըլ Ասլանեանին, վերջին հինգ տարիներու կրթական ներդրումին ու ներկայ ծրագրին նախապատրաստական աշխատանքներուն մէջ ունեցած իր դերին համար: Շնորհակալութիւն կը յայտնեն մեր վարժարաններու տնօրէններուն ու անհատապէս ուսուցչական կազմի բոլոր դաստիարակներուն իրենց անցեալի հաւատաւոր ներդրումին համար ու ապագայի հեռանկարներով: Շնորհակալութիւն կը յայտնեն ձեզի, սիրելի ծնողներ, ու ատելորդ կը նկատեն

յայտարարելու որ առանց ձեր հաւատքին ու ամէն տեսակի գոհաբերութեան Հայ
Գարոցը կը դադրի գոյութիւն ունենալ:

Շնորհակալութիւն ձեր բոլորին

[HOME](#)